3755

...նական Գրաֆանոցի

ԾԱՂԿԱՓԱՂ

ԱՐՔԱԿ ԵՒ ՔԱՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

Ի ՊԷՏՍ Վ. ԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՐԱՐԵԱԼ

Ի ԿԱՐԱՊԵՏԻ; ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԾՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Ի. ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծառն արմատով է ծառ.
Տունն հիմամբ է տուն.

Longum iter est per praecepta,
Breve et efficax per exempla.

ЭРИВАНСКОЙ УЧИТЕЛЬСКОЙ
УЧЕБНИКИ
и учебныя пособія
СЕМИНАРІИ

491.99-8
Ա-75

ՏՓԽԻՍ
Մովսիսի Վարդանեան
1884

arm
918
491.99-8
Ч-75
1005-10
Հրատարակութիւն Կենդրոնական Գրավաճառանոցի
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
С. С. Р

ԾԱՂԿԱՓԱՂ

ԱՐՁԱԿ ԵՒ ՁԱՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

Ի ՊԷՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՐԱՐԵԱԼ

Ի ԿԱՐԱՊԵՏԻ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ԾՐԱՆ ԱՌԱՋԻՆ

Բ. ՑՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծառն արմատով է ծառ.
Տունն հիմամբ է տուն.

Longum iter est per praecepta,
Breve et efficax per exempla.

ՏՓԽԻՍ
Տպարան Մովսիսի Վարդանեան:
1884

24.05.2013

Дозволено Цензурою. Тифлисъ. 22 Октября 1884

ՀՍՍՌ-Арм.ССР
60746-67

Тип. М. Вартанянца Тройц. пер. д. № 11

Ա Զ Դ

Համարենք թէ աշակերտը նոր է ուսել խոնարհումն եւ հոլովումը: Անմիջապէս նորա ձեռքը տալու է այս Ծաղկաքաղը: Սորա մէջ ամփոփուած են Հայոց նախնի մատենագրութիւնից եւ Սուրբ Գրքից առած այնպիսի հատուածներ, որ նորավարժ աշակերտին մատչելի են եւ հետաքրքրելի:

Բոլոր հատուածների թիւն է 58. նոցա ուսումնասիրութիւնը միակերպ լինելու չէ. ոմանք կարդալու եւ թարգմանելու համար են, ոմանք չափածոյ ձեւից արձակի փոխադրելու, ոմանք թելադրութեան եւ վերլուծութեան, ոմանք անգիր անելու, կամ կարդացածը բերանացի աշխարհօրեն պատմելու եւ այլն: Այդ ամենի ընտրութիւնը կախուած է վարժապետից:

Այս երկրորդ տպագրութեան մէջ մենք արժան տեսանք մի քանի կարեւոր փոփոխութիւններ անել՝ աչքի առաջ ունենալով մեր եւ ուրիշների փորձերը: Մի քանի հատուածներ դուրսը թողինք, որպէս զի մեր Ծաղկաքաղի Ա. շրջանի մէջ աւելի շատ տեղ գրաւեն Ս. Գրքի հատուածները. որովհետեւ նոցա առաջնորդութեամբ աշակերտն աւելի հեշտ կարող է գտնել իւր զարգացմանն համապատասխան ընտրութիւն գրաբառի մէջ:

Ա. ԳԱՐՈՒՆ.

Զմեռն էանց. անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան. ծաղիկք երեւեցան յերկրի. ժամանակ յատանելոյ եհաս. ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում. թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր. այգիք մեր ծաղկեցան եւ եռուն զհոտս իւրեանց։

Բ. ՇԱՒԻՂՔ ԱՄԲԱՐՇՏԱՑ.

Որդեակ մի՛ խաբեսցեն զքեզ արք ամբարիշտք։ Եթէ կոչեսցեն զքեզ եւ ասիցեն. Ե՛կ ընդ մեզ. ծածկեսցո՛ւք յերկրի զայր արդար. բարձցո՛ւք զյիշատակ նորա յերկրէ։ եւ զառացուածս նորա զպէսպէս ըմբռնեսցո՛ւք. լցցո՛ւք զտունս մեր աւարաւ։ Որդեակ մի՛ երթար ճանապարհ ընդ նոսա, զի ոտք նոցա ի չարիս ընթանան։

Գ. ՄՇԱԿՔ ԱՅԳԻՈՅՆ.

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի· եւ ցանկով պատեաց զնա. եւ փորեաց ի նմա հնձան. եւ շինեաց աշտարակ· եւ ետ զնա ցմշակս. եւ գնաց ի տար աշխարհ։ Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա։ Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկոծեցին։ Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազումս քան զառաջինսն, եւ արարին նոցա նոյնպէս։ Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ։ Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միմս. Սա է ժառանգն. եկայք, սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն։ Եւ հանին զնա արտաքս քան զայգին եւ սպանին։

Դ. ԵՐԴ ԴԱՇՏԱՅ.

Զի՞նչ քաղցր մեզ շինականաց,
Բայց նուագել զերգս դաշտաց,
Զարօտ լերանց, զաղբիւր վճիտ,
Ըզհովանիս անտառախիտ։

Ե. ՈՐՍՈՐԴ.

Որսորդն կալաւ կաքաւ մի· եւ կամէր զենուլ· եւ ասէ կաքաւն· Մի սպանաներ զիս. զի ես խաբեցից զքաղում կաքաւս եւ ածից յակնատս քո։ Եւ ասէ որսորդն. Այժմ ստուգիւ մեռցիս ի ձեռաց իմոց. զի զսիրելիս եւ զազգականս քո մատնես ի մահ։

Զ. ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ՏԵԱՌՆ.

Մի յօժարեսցիս ընդ բազումս ի չարիս։ Մի՛ հաւանեսցիս ընդ անիրաւի լինել վկայ անիրաւ։ Ցամենայն ի զուր բանէ ի բաց լինիցիս. եւ զարդարն եւ զանպարան մի՛ սպանանիցես. եւ զամբարիշտն մի՛ ապրեցուցանիցես վասն կաշառաց։

Է. ԵՐԱԶ.

Տեսանէի ծառ մի ի մէջ երկրի. եւ բարձրութիւն սորա մինչեւ յերկինս. եւ լայնութիւն նորա ի ծագս ամենայն երկրի. տերեւ նորա գեղեցիկ. եւ պտուղ նորա բազում։ Ի ներքոյ նորա ընակեալ էին գազանք վայրի. եւ յոստս նորա հանգուցեալ էին թռչունք երկնից։ Տեսանէի եւ ահա զուարթուն իջանէր յերկնից եւ ասէր. Հատէք զծառդ եւ քշտեցէք զոստս դորա. թօթափեցէք զտերեւ դորա. եւ զպտուղ դորա ցրուեցէք։

Ը. ՏՐՏՈՒՆՋ.

Եղեւ երբեմն տրտունջ անդէոց, թէ վասն ծննդոց մեր աշխատիմք. եւ ոտեամբք ժողովեմք կաթն. եւ մարդիկ ճմլեալ զոլոկունս՝ առնուն ի մէնջ զվաստակս մեր. ելցուք եւ այլ մի դարձցուք առ նոսա։ Եւ մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպէս. զի զաւելորդսն քան զպէտս ծննդոց մերոց առնուն մարդիկ. եւ խընամեն մարդիկ զմեզ եւ զծնուդս մեր. զի առնումք շատ քանթէ տամք։

Թ. ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ.

Երանեալ է այր, որ եգիտ զիմաստութիւն. զի լաւ է զվաճառն զայն գտանել քան զդանձս ոսկւոյ եւ արծաթոյ. պատուականագոյն է քան զականս պատուականս. ամենայն ինչ պատուական չարժէ զնա. զի երկայն աւուրք եւ ամք կենաց ի յաջմէ իւրմէ, եւ յահեկէ իւրմէ՝ փառք եւ մեծութիւն. ի բերանոյ նորա բղխի արդարութիւն. զօրէնս եւ զողորմութիւն ի լեզուի իւրում կրէ։

Ժ. ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՔՍԱՒՈՐՆ.

Երք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի եւ միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի եւ զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքեզն. զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ, զյափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս կամ իբրեւ զայս մաքսաւոր. այլ պահեմ երկիցս ի շաբաթու եւ տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց։ Եւ մաքսաւորն կայր մեկուսի եւ ոչ կամէր զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս։ Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա, զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի։

ԺԱ. ԽՐԱՏ.

Լուր, որդեակ, խրատու հօր քո. դարձո զոտն քո ի ճանապարհէ չարէ. իմոյ իմաստութեան անսա եւ իմոց բանից մատո զունկն քո. զի մի զղջանայցես յետոյ եւ ասիցես թէ զիարդ ատեցի զխրատ, ոչ լսէի ձայնի խրատուի իմոյ եւ ուսուցչի իմոյ ոչ դնէի զունկն իմ։

ԺԲ. ԳԱՐՈՒՆ.

Լուծան գետոց սառամանիք,
Պճնի երկիր դալարագեղ:
Ենչէ զեփիւռ արդ քաղցրասիք,
Արդ արձակեն հաւք զգեղգեղ:
Լեր դու, մանուկ, գործօն և ժիր,
Տես իբր ի գործ ճեպի մեղուակ.
Համեստութիւն, դստրիկդ, ուսիր,
Մինչ ժողովես զմանիշակ:

ԺԳ. ՍԱՄԱՐԱՑԻՆ ՈՂՈՐՄԱԾ.

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով. եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ վէրս եդին, թողին կիսամահ եւ գնացին: Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ. եւ տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես եւ զանց արար: Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ. եւ տեսեալ զնա գթացաւ. եւ մատուցեալ՝ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի եւ դարմանեաց զնա: Եւ ի վաղիւ անդր՝

իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ. Դարմանն տար դմա. եւ զոր ինչ ծախիցես 'ի դա, ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ:

ԺԴ. ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ.

Մի յապաղէր բարի առնել կարօտելոյն: Ցորժամ ձեռընհաս իցես օգնել նմա, մի ասիցես թէ երթ եւ եկեսջիր եւ վաղիւ տաց: Քանզի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ: Մի նիւթեր բարեկամի քում չարիս, որ յեցեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ:

ԺԵ. ՈՐՈՋ ԱՂՔԱՏԻՆ.

Արք երկու էին քաղաքի միում, մինն մեծատուն եւ միւսն աղքատ: Եւ մեծատանն էին հօտք եւ անդեայք բազում յոյժ: Եւ աղքատին եւ ոչինչ, բայց որոջ մի փոքր. եւ որոջն հաստատեալ էր ընդ որդիս նորա ի միասին. ի հացէ նորա ուտէր. եւ ի բաժակէ նորա ըմպէր. եւ ի ծոց նորա ննջէր. եւ էր նորա իբրեւ զդուստր: Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն. եւ խնայեաց մեծատունն առնուլ ի հօտից իւրոց եւ յանդէոց իւրոց. եւ էառ զորոջ աղքատին եւ արար առնն եկելոյ կերակուր:

ԺԶ. ԱՂՔԱՏՆ.

Աղքատն ի տօթոյ տապանայ. ի ցրտոյ դողայ. որովայնն սին եւ մարմինն մերկանդամ. հերքքն թաղկեալք, դէմքն դեղնեալ եւ թոշոմեալ. եւ ամենայն մարմինքն գգուաղեալք եւ երիթացեալք. թափառի, վարանի եւ ի դուրս երերեալ եւ գագարեալ կառանչէ. եւ խանդաղատելի ողորմուկս արկանէ. եւ սուղ ինչ կերակուր բաղում աշխատութեամբ գտանէ. եւ երկիւղիւ ի դրունս, երկիւղիւ ի գաւիթս, երկիւղիւ ի տունսն մտանէ։ Ի տունսն յանասնոցն երկնչի. զի ձիքն կիցք հանեն, եզինքն եղջիւր ածեն, շունքն վերաւորեն եւ մարդք չարք եւ անողորմք բամբասեն եւ թշնամանեն։

ԺԷ. ՊԱՏԳԱՄՔ ԱՍՏՈՒԱԾԱՑԻՆՔ.

Խնդրեցէք եւ տացի ձեզ. հայցեցէք եւ գտջիք. բախեցէք եւ բացցի ձեզ։ Տուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք առնուլ։ Զամենայն զայրի եւ զորբ մի՛ չարչարիցէք։ Դիւրին է մալխոյ ընդ ծակ ասղան անցանել քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ մտանել։

ԺԸ. ԹՂԵՆԻՆ ԱՆՊՏՈՒՂ.

Թղենի մի էր ուրու

Ի. ԱՌ ՄԵՂՈՒ.

Թէ քաղցր ասես, մեղո՛ւդ գործուն,
Զիմ երեկեան մարդ ազազուն,
Արդ փունջ առատ կապեմ զարդիս,
Արածել անդ երբ եւ հաճիս։

Մինչդեռ աջող է եղանակ,
Մեղր ամբարեա՛ ի քոյդ փեթակ.
Ոչ միշտ գարուն, ոչ միշտ աշուն,
Ձմեռն գայ քեզ սառնատուն։

Գործեա՛, մեղո՛ւ, դու ինձ անհատ,
Ի մեղր ի մոմ բրճիճ առատ.
Զի ի Սաղիմ յորժամ երթայց,
Ի սուրբ տաճար նուէր տարայց։

ԻԱ. ԱՆՄԵՂ.

Սովորաբար անմեղ յանտառս միշտ ազազակէ, մանաւանդ ի տեսանել զոք ի կենդանեաց։ Եւ ի հարցանել ձագոյն՝ ասէ. «Զի թշնամիք միշտ արթուն զիս տեսցեն, եւ մի՛ յորս ինչ մտարերիցեն։

ԻԲ. ՊԱՏԱՐԱԳՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ.

1. Փորձեաց Աստուած զԱբրահամ եւ ասէ ցնա. Աբրահա՛մ, Աբրահա՛մ. եւ նա ասէ. Ա՛ւասիկ եմ։ Եւ ասէ ցնա. Ա՛ռ դու զորդիդ քո սիրելի, զոր սիրեցեր, զԻսահակ եւ գնա՛ դու յերկիր բարձր. եւ հանցես զդա անդ յողջակէզ ի վերայ միոյ լերանց, յորոց ասացից քեզ։

2. Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն. համբեցաց զէշ իւր. եւ առ ընդ իւր երկուս ծառայս եւ զԻսահակ զորդի իւր. եւ պատառեաց փայտ յողջակէզ. եւ յարեաւ գնաց։ Եւ եկն ի տեղին, զոր ասաց նմա Աստուած. եւ յաւուրն երրորդի համբարձ Աբրահամ զաչս իւր եւ տես զտեղին ի հեռաստանէ։ Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. Նստարո՛ւք դուք այդր հանդերձ իշովդ. եւ ես եւ պատանեակդ երթիցուք մինչեւ ցանդր եւ երկիր պագցուք եւ դարձցուք առ ձեզ։

3. Եւ առ Աբրահամ զփայտ ողջակիզին. եւ եդ ի վերայ Իսահակայ որդւոյ իւրոյ. եւ առ ի ձեռն զսուրն եւ զհուրն. եւ գնացին երկոքեան ի միասին։ Եւ ասէ Իսահակ ցԱբրահամ հայր իւր. Հա՛յր. եւ նա ասէ. Զի՞ է, որդեա՛կ. եւ նա ասէ. Ա՛հա հուր եւ ա՛հա փայտ. ո՞ւր է ոչխար յողջակէզ. եւ նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ, որդեա՛կ։ Գնացին երկոքեան ի միասին. եւ եկին ի տեղին, զոր ասաց նմա Աս-

տուած։ Անդ շինեաց սեղան Աբրահամ. եւ եդ ի վերայ զփայտն. եւ կապեաց զԻսահակ զորդի իւր. եւ եդ զնա ի սեղան ի վերայ փայտին. եւ ձգեաց Աբրահամ զձեռն առնուլ զսուրն եւ զենուլ զորդին իւր։

4. Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից եւ ասէ. Աբրահա՛մ, Աբրահա՛մ. եւ նա ասէ ցնա. Ա՛ւասիկ եմ. եւ ասէ. Մի՛ մխեր զձեռն քո ի պատանեակդ եւ մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի, թէ երկիւղած ես դու յԱստուծոյ եւ ոչ խնայեցեր յորդիդ քո սիրելի վասն իմ։ Համբարձ Աբրահամ զաչս իւր եւ ետես եւ ահա խոյ մի կախեալ կայր զծառոյն Սաբեկայ զեղջերաց։ Եւ գնաց Աբրահամ, առ զխոյն եւ եհան զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ իւրոյ։

ԻԳ. ԲԱՆՔ ՓՐԿԶԻՆ.

Սիրեցէք զթշնամիս ձեր. բարի արարէք ատելեաց ձերոց. օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօթս արարէք ի վերայ նեղչաց ձերոց։ Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա։ Նովին չափով, որով չափէք, չափեսցի ձեզ։ Հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ եւ ապա հայեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քոյ։ Զինչ ինչ ծածուկ, որ ոչ յայտ լիցի. եւ գաղտնի, որ ոչ ծանիցի։ Մառ ի պտղոյ իւրմէ ճանաչի։ Չէ մարգարէ ընդունելի ի քաղաքի իւ-

բում։ Ոչէ աշակերտ լաւ քան զվարդապետ իւր։ Ոչ ի փշոց քաղեն թուզ եւ ոչ ի մորենւոյ կթեն խաղող։ Ի յաւելուածոյ սրտին խօսի բերան։ Ո՛ւր գանձն ձեր է, անդ եւ սիրտք ձեր եղիցին։

ԻԴ. ԱՌԵՂԾՈՒԱԾ Ի ՑՈՎՆԱՆ.

Առանց քայլելոյ
Ընթացաւ ի ծով,
Եւ չունէր նաւակ.

Անողոզ ի ջրոյ
Թաղեցաւ ընդ ջրով
Ի ծովուն յատակ.

Զուրկ էր նա յօդոյ,
Մեռեալ ոչ գոլով,
Եւ շնչէր յստակ.

Ո՞վ իցէ այս մարդ,
Ասա՛ դու ինձ արդ
Եւ առասպելս
Իմ գիտակ լինիս։

ԻԵ. ՑՈՎՍԷՓ ԳԵՂԵՑԻԿ.

1. Իսրայէլ սիրէր զՑովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր. եւ արար նմա պատմու-

ճան ծաղկեայ։ Իբրեւ տեսին եղբարքն նորա թէ սիրէ զնա Հայրն քան զամենայն որդիս իւր՝ ատեցին զնա. եւ ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա խաղաղութեամբ։ Եւ ետես երազ Յովսէփ. եւ պատմեաց եղբարց իւրոց. եւ ասէ ցնոսա. «Լսուարուք զերազն զոր տեսի. Թուէր եթէ որայ կապէաք ի դաշտի միում. եւ կանգնեցաւ որայն իմ, եկաց ուղղորդ. եւ զարձան որայքն ձեր եւ պագին երկիր իմում որայոյն։»

2. Եւ ասեն ցնա եղբարքն իւր. «Մի՞թէ թագաւորելով թագաւորեսցես ի վերայ մեր, կամ տիրելով տիրեսցե՞ս մեզ։» Եւ յաւելին եւս ատել զնա վասն երազոցն նորա եւ վասն բանիցն նորա։ Եւ ետես միւս եւս երազ. եւ պատմեաց հօր իւրում եւ եղբարց իւրոց. եւ ասէ. «ահա տեսանէի միւս եւս այլ երազ, որպէս թէ արեգակնդ եւ լուսին եւ մեծասան աստեղք երկիր պագանէին ինձ։» Սաստեաց նմա հայրն իւր եւ ասէ. «զի՞նչ է երազն զոր տեսեր. արդ գալով գայցե՞մք ես եւ մայր քո եւ եղբարք քո եւ երկի՞ր պագանիցեմք քեզ։» Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր, բայց հայրն պահէր զբանսն։

3. Եւ գնացին եղբարք նորա արածել զխաշինս հօրն իւրեանց։ Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. «ո՞չ աւասիկ եղբարք քո արածեն զխաշինսն. Եկ առաքեցից զքեզ առ նոսա. Երթ, տես եթէ հո՞ղջ իցեն եղբարքն քո եւ խաշինք. եւ բե՛ր ինձ զրոյց։» Եւ առաքեաց զնա. տեսին զնա եղբարքն

յառաջագոյն ի հեռաստանէ. եւ ասեն իւրաքանչիւր ցեղբայր իւր. «ահա՛ երազատեսն գայ. եկա՛յք սպանցո՛ւք զնա եւ ընկեսցո՛ւք ի մի ի գբոց աստի. եւ ասասցո՛ւք եթէ գազան չար եկեր զնա, եւ տեսցո՛ւք զի՞նչ լինիցին երազքն նորա»։

4. Եւ եղեւ իբրեւ եկն Յովսէփ առ եղբարսն իւր, մերկացին զպատմուճանն նորա ծաղկեայ ի նմանէ եւ առին ընկեցին զնա ի գուբ մի. եւ նստան ուտել զհացն։ Զաչս ի վեր բարձեալ տեսին, եւ ահա ճանապարհորդք գային. եւ ասէ Յուդա ցեղբարսն իւր. «զի՞նչ օգուտ է, եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր, եւ թագուցանիցեմք զարիւն նորա. եկա՛յք վաճառեսցո՛ւք զնա. եւ ձգեցին հանին զՅովսէփ ի գբոյ անտի եւ վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի. եւ իջուցին զՅովսէփ յԵգիպտոս։

1008
3498

5. Եւ առեալ զպատմուճանն Յովսէփայ՝ զեղին ուլ այծեայ եւ թաթաւեցին զպատմուճանն յարեան. եւ առաքեցին զպատմուճանն ծաղկեայ տանել առ հայրն իւրեանց եւ ասեն. «զայդ գտաք. ծանի՛ր եթէ որդւո՞յ քո ի՞նչ պատմուճանդ»։ Եւ ծանեաւ զնա եւ ասէ. «պատմուճանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա. գազան յափշտակեաց զՅովսէփ»։ Եւ պատառեաց զհանդերձս իւր եւ քուրձ զգեցաւ ի վերայ միջոյ իւրոյ. եւ սուգ առնէր ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս բազումս։

ԻԶ. ՍԵՐՄԱՆԱՀԱՆ.

Ահաւասիկ ել սերմանող սերմանել. եղեւ ի սերմանելն ոմն անկաւ առ ճանապարհաւ. եկն թռչուն եւ եկեր զնա։ Եւ այլն անկաւ յապառաժի, ուր ոչ գոյր հող բազում, եւ վաղվաղակի բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին. եւ յորժամ ծագեաց արեւ, ջեռաւ. եւ զի ոչ գոյին արմատք, ցամաքեցաւ։ Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն եւ հեղձուցին զնա. եւ պըտուղ ոչ ետ։ Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. եւ ելեալ աճեցեալ տայր պտուղ. եւ բերէր ընդ միոյ երեսուն եւ ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարիւր։

ԻԷ. ՈՒՆԱՑՆՈՒԹԻՒՆ.

Ծաղկի գարուն քաղցր ի կանաչ.
Սահին առուակք քաղցրակարկաչ.
Երգէ սոխակ զիւրն աւազ,
Ցայտնել զսէր իւր և զհառաչ։

Փըթթին և վարդք այգուն վաղքաջ,
Զորով արև տայ զիւր պաղպաջ.
Բայց մինչև երբ գնան յառաջ.
Թօշնի և վարդ, թօշնի կանաչ։

Ամենայն ինչ ունի աւարտ,
Ժամանակաւ գնայ յաղարտ.
Եւ քոյդ, անձն իմ, իզձ տարապարտ,
Ընդ նոյն սևեալ և քոյին քարտ։

ԻԸ. ԱՆԿՈՒՄՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ.

ԶիաՀրդ զատաւ նոտաւ մենացեալ քաղաքն բազմաժողով. եւ եղեւ իբրեւ այրի լցեալ տըրտմութեամբ։ Իշխան աշխարհին եղեւ հարկատու։ Սուգ առին ճանապարհք Սիօնի. ամենայն դըրունք նորա եղեն յապականութիւն. եւ քահանայք նորա հաշին եւ հառաչեն եւ յոգւոց ելանեն. կուսանք նորա ի գերութիւն վարեցան։ Եւ եղեն գերիչք նորա ի գլուխ եւ թշնամիք նորա յուրախութիւն։ Տղայք նոցա վարեցան ի գերութիւն. թխացան քան զածուխ տեսիլք իւրեանց եւ ոչ ոք ճանաչէր զնոսա. մածեալ էր մորթ յոսկերս նոցա. բրտացան նոքա եւ եղեն իբրեւ զփայտ չորացեալ. կցեցան լեզուք դիացիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւոյ իւրեանց. տղայք զհաց խնդրէին եւ ոչ ոք էր, որ բերէր նոցա։

ԻԹ. ԲԱՐԿՈՒԹԻՒՆ.

Բարկութիւն զարիւնն եռացուցանէ, զմարմինն դողացուցանէ, զաչսն այլագունէ, զգոյնն

շրջէ. եւ ամենեւիմբ զմարդն վայրենի ցուցանէ եւ տայ աղաղակել բազում մորոսախօսութեամբ։ Ոչ դեղք մահաբերք եւ ոչ հարուածք կարճի նման են հարուածոց բարկութեան. ոչ հատումն սրոյ եւ ոչ այրեցուած հրոյ կսկծեցուցանեն առաւել քան զբարկացողացն։ Յորժամ միանգամ զխորհուրդս մարդոյ ըմբռնէ անօրէն ախտն բարկութեան, յափշտակէ զմիտսն ի նմանէ եւ գաղանացուցանէ։ Ոչ ամօթ եղբարցն, ոչ խրատ վարդապետաց, ոչ հրամանք պատուիրանաց զնա ոչ պատկառեցուցանեն ի զեղջ եւ յապաշաւ։

Լ. ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷ.

1. Բաղդասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց. իբրեւ ընդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ եւ զոսկւոյ, զոր եհան Նաբուգոդոնոսոր հայր նորա ի տաճարէն, որ յԵրուսաղէմ; զի արքային նոքօք թագաւորն եւ մեծամեծք իւր։ Ըմպէին նոքօք զգինի եւ օրհնէին զաստուածս զոսկեղէնս եւ զպղնձիս եւ զերկաթիս եւ զփայտեղէնս եւ
2. զքարեղէնս։ Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ եւ գրէին հանդէպ գնդին ի վերայ բաւելոյ որմոյ տաճարի թագաւորին։ Եւ թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն, որ գրէր։ Յայնժամ հատան գոյնք թագաւորին եւ խորհուրդք նորա խռովէին զնա եւ յօդք

միջոյ նորա լուծանէին եւ ծունկք նորա զմի-
3. մեանս բաբախէին։ Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ ածել զմոգս եւ զքաղդեայս եւ զգէտս։ Եւ ասէ ցիմաստունսն Բաբելացւոց. Որ ընթերցցի զգիրդ զայդ եւ զմեկնութիւն դորա ցուցցէ ինձ, ծիրանիս զգեցցի եւ մանեակ ոսկի ի պարանոց իւր եւ երրորդ ի թա-
4. գաւորութեան իմում տիրեսցէ։ Եւ մտանէին ամենայն իմաստունք թագաւորին եւ ոչ կարէին զգիրն ընթեռնուլ եւ ոչ զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին։ Եւ արքայ Բաղդասար խռովեցաւ եւ գոյն երեսաց նորա շրջեցաւ. խռովեցան եւ մեծամեծք նորա ընդ-
5. նմա։ Եւ եմուտ տիկինն ի տաճար ուրախութեանն եւ ասէ. Արքայ, յաւիտեան կեաց. մի՛ խռովեցուսցեն զքեզ խորհուրդք քո եւ գոյն երեսաց քոց մի՛ եղծցի։ Զի է այր մի ի թագաւորութեան քում. եւ արքայ Նաբուգոդոնոսոր հայր քո իշխան կացոյց զնա ի վերայ գիտաց եւ մոգուց եւ քաղդեայց եւ ըղձից։
Մեկնէ երազս եւ պատմէ զառակս եւ լուծանէ զիրս կապեալս—Դանիէլ։ Եւ արքայ Բաղդասար անուն եդ նմա. Արդ կոչեսցի եւ զմեկ-
6. նութիւն դորա պատմեսցէ։ Յայնժամ ածին ի ներքս զԴանիէլ առաջի թագաւորին։ Եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. «լուայ զքէն թէ հոգի Աստուծոյ է ի քեզ. եւ արդ աւասիկ մտին առաջի իմ իմաստունք եւ մոգք եւ իղձք,

զի զգիրդ զայդ ընթեռնուցուն եւ զմեկնութիւն դորա ցուցցեն ինձ. եւ ոչ կարացին պատմել ինձ. եւ ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել մեկնութիւնս. եւ արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ եւ զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս եւ մանեակ ոսկի ի պարանոցի քում եւ երրորդ ի թա-
7 գաւորութեան իմում տիրեսցես»։ Եւ ասէ Դանիէլ առաջի թագաւորին. Պարգեւք քո քեզ լիցին եւ զպատիւ տան քո այլում տուր. բայց զգիրդ ես ընթերցայց եւ զմեկնութիւն դորա ցուցից քեզ։ Ա՛ռքայ, Աստուած Բարձրեալ զմեծութիւն եւ զթագաւորութիւն եւ զպատիւ եւ զփառս ետ Նաբուգոդոնոսորայ հօր քում։ ամենայն ազգք եւ ազինք եւ լեզուք զարհուրեալք զողային յերեսաց նորա. զորս կամէր՝ հարկանէր. զորս կամէր, սպանանէր. եւ զորս կամէր ինքն, բարձրացուցանէր. եւ
8. զորս կամէր ինքն, խոնարհեցուցանէր։ Եւ յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ. եւ պատիւն բարձաւ ի նմանէ, մինչեւ ծանեաւ թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան։ Եւ արդ դու որդի նորա Բաղդասար ընդդէմ Աստուծոյ երկնից հպարտացար. եւ զսպասս տան նորա բերին առաջի քո. եւ դու եւ մեծամեծք քո ըմպէիք նոքօք զգինի. եւ զաստուածս, որք ոչ տեսանեն եւ ոչ լսեն եւ ոչ իմանան՝ օրհ-

9. նէիք։ Վասն այնորիկ առաքեցաւ թաթ ձեռինն եւ զգիրդ զայդ գրեաց։ Եւ այս ինչ է գիրդ որ գրեալ է. Մանէ, Թէկէղ, Փարէս։ Եւ այս է մեկնութիւն բանիդ. մանէ՝ չափեաց Աստուած զթագաւորութիւն քո. Թէկէղ՝ կշռեցաւ ի կշիռս եւ գտաւ պակասեալ. փարէս՝ բաժանեցաւ թագաւորութիւն քո եւ տուաւ Մարաց եւ Պարսից։

ԼԱ. ԳԱՐՈՒՆ.

Սիրեցեա՛լդ եմ, էանց Հիւսիս,
Զքո՝ Լուս յամեմք աստ ի սարիս,
Բանան ահա՛, տես, դրունք գարնան,
Բարիք ամէն ընդ նոյն դառնան։

Ո՞չ տեսանես զդաշտ դալար.
Զքո՝ ոչ թողուս զտսղաւար.
Արտաքս ահա՛ ոստնու մշակ,
Յողջոյն ծիծռան գարնան գուշակ։

Զարգելական հօտ իւր հովիւ
Տայ մակաղել առ հեշտ առուիւ.
Հնչեն անձաւք, անտառք, լերինք
Եւ արձագանգք քաղցր ի սրինգ։

Քաջն արտավար կազմէ զխոփ,
Առ Հիւսսի շունչ ոչ սրտատրոփ,

Զկորդացեալ փշրէ զբունձ,
Հարթեալ ի ցան և յառատ հունձ։
Հնչեն մայրիք հովանախիտ
Ի խոխոջմանց ականակիտ.
Զարդարին թուփք, ծառք ի սաղարթ,
Եւ ազդք հաւուց ճճուեն զուարթ։

ԼԲ. ԵՐԿԻՐ Ի ՓՈՔՐՈՒՆՑ.

Զբոյն մրջեան արջ փորէր. եւ լեզուաւ ժողովէր եւ ուտէր. եւ հնարի մրջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ եւ գոռեխ եւ մթեխ եւ շանաճանճ եւ բրէտ եւ առ նմանք սոցին եւ աղաչէ օգնել իբր ազգայինք. ցաւակցեն. հարկանեն զաչս եւ զլսելիս արջուն. եւ հարկանէ գլուխ զքարի. եւ նեխի. եւ որդունք եւս ծնանին. եւ ի սատակութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէր. եւ նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. եւ նեղեալ դիմէ ի հոսանս ջրոյ. եւ անչափ ի ներքս մտեալ հեղձանի։

ԼԳ. ԱՄԱՌՆ.

Հովանաւոր ընդ ծառով,
Շուրջ պարուրեալ ի յոստոց,
Հանգչիմ, ուր սիւք շնչէ զով
Տերևակոյտ ի բազմոց։

Սաղարթագեղ մայրեաց ծայրք
Տատանին մեղմ ի զեփիւռ,
Եւ ծածանին դաշտավայրք,
Ի շէկ ցորեան համատիւռ։

ԼԴ. ԲՈՒ ԵՒ ԱՐԾԻՒ.

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ. եւ խնդրեաց զդուստր նորա Հարսն, ասելով. «դու տունջեան քաջամարտիկ ես եւ ես գիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւն»։ Եւ յետ բազում թախանձանաց յանձն առ տալ։ Եւ ի լինել հարսանեացն ի տուէ լոյս ոչ կարէր տեսանել փեսայն. եւ ծաղր առնէին բազմեալքն. եւ իբրեւ եղեւ գիշեր՝ եւ ոչ Հարսն ետես լոյս. յաճախեաց եւ անդ այպանումն. եւ վասն այսորիկ փութով լուծաւ Հարսանիքն։

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ, որ զդստերս իւրեանց յամուսնութիւն տան այլասեռից. ուստի եւ ոչ է միաբանութիւն։

ԼԵ. ՈՒԽՏ ՑԵՓԹԱՅԵԱՑ.

1. Եւ ուխտեաց Ցեփթայէ ուխտս Տեառն եւ ասէ. Եթէ մատնելով մատնեսցէ զորդիս Ամմոնայ ի ձեռս իմ եւ եղիցի, որ ելանելով ելանիցէ ի դրանց տան իմոյ ընդառաջ իմ ի դառ-

նալն իմում խաղաղութեամբ յորդւոցն Ամնայ, եղիցի, զի մատուցից զնա Տեառն յողջակէզ։ Եւ անց Ցեփթայէ առ որդիսն Ամնայ պատերազմել ընդ նոսա. եւ մատնեաց զնոսա Տէր ի ձեռս նորա. եւ եհար զնոսա հարուածս մեծամեծս յոյժ. եւ վանեցան որդիքն Ամնայ յերեսաց որդւոց Իսրայէլի։

2. Եւ եկն Ցեփթայէ ի տուն իւր. եւ ահա դուստր իւր ելանէր ընդ առաջ նորա թմբկօք եւ պարուք. եւ նա էր միամօր սիրելի նորա. եւ ոչ գոյր նորա բաց ի նմանէ ուստր կամ դուստր։ Եւ եղեւ իբրեւ ետես զնա, պատառեաց զհանդերձս իւր եւ ասէ. Վա՜յ է ինձ, դո՛ւստր իմ, ընկճեցեր զիս. խոչընդակն եղեր ինձ, զի ես բացի զբերան իմ վասն քո առ Տէր. եւ ոչ կարացից դարձուցանել։ Եւ ասէ ցնա. Եթէ վասն իմ բացեր զբերան քո առ Տէր, արա՛ զիս, որպէս ել ի բերանոյ քումմէ. փոխանակզի արար քեզ Տէր վրէժխնդրութիւն ի թշնամեաց քոց։

3. Եւ ասէ ցհայր իւր. Արա՛ ինձ զբանս զայս. թողացո՛ ինձ զերկուս ամիսս եւ երթայց շրջեցայց ընդ լերինս եւ լացից զկուսութիւնս իմ—ես եւ ընկերք իմ։ Եւ ասէ ցնա. Ե՛րթ. եւ արձակեաց զնա զերկուս ամիսս. եւ չոգաւ ինքն եւ ընկերք իւր եւ ելայ զկուսութիւն իւր ի վերայ լերանց։ Եւ եղեւ յետ կատարելոյ երկուց ամսոցն՝ դարձաւ առ հայր իւր. եւ արար նոքաւ զուխտն, զոր ուխտեաց։

ԼԶ. Ի ՄԱՀ ՍՈԽԱԿԻՆ.

Ա՛չք գեղեցիկ ցողագին
Լացէք զմահ սոխակին.
Շողշողուն ա՛չք աստեղաց,
Զսոխակին առէք լաց։

Շիջաւ աչացս իմ արև,
Կեանքն ապաշաւ ինձ եղև.
Արդ ես զլալ հարկանեմ,
Զայլ ջայլեմանց սուգ նսեմ։

Ա՛չք գեղեցիկ ցողագին
Լացէք զմահ սոխակին.
Ա՛չք լուսալիր աստեղաց,
Զսոխակին հարէք լաց։

ԼԷ. ԻՄԱՍՏՈՒՆ ԿՈՒՍԱՆՔ.

1. Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդառաջ փեսային եւ հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին եւ հինգն իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին։ Իսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին։

2. Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա՛

փեսայ գայ, արիք ընդառաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տո՛ւք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի եառուն իմաստունքն եւ ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական, այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջիք ձեզ։

3. Իբրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն. եւ փակեցաւ դուռնն։ Յետոյ գան եւ այլ կուսանքն եւ ասեն. Տէր Տէր, բաց մեզ. Նա պատասխանի եա եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գիտեմ զձեզ։

ԼԸ. ԵՂԱՆԱԿՔ.

Նաժիշտք արփւոյն չորեքին,
Որ իշխեցողք են տարւոյն.
Մին որ ի ճեմ իւր ոտին
Պճնէ զարօտ երփն ի գոյն,
Երկրորդն ի շող բոցակէզ,
Միւսն ողկուզովք սիգաճեմ,
Չորրորդն ի ձեանց բազմեալ դէզ
Տային միմեանց վէճ ընդդէմ։

Նորափետուր մին ինև,
Ասէր, երկիր զարդարի,
Միւսն այն թէ զհասկ ոսկեձև
Ես ներկանեմ ի վայրի.
Նախանձընդդէմ երկոցուն

Անդուստ և միւսն պանծայր
Գոլ լուսատու ձիթենւոյն
Եւ զուարթարար որթոյն մայր։

Չորրորդն յայնժամ դաշն և հեզ
Ձայնեալ առ քորս իւր, ասէր.
Թող արմտիք կացցեն ձեզ
Ծաղկունք եւ կուրթք այգեբեր.
Այլ Տէրն ի գալ իւր յաշխարհ
Առ ի ծնանել տղայաբար
Նախամեծար զարհամարհ
Սառամանիսն իմ արար։

ԼԹ. ԲԱՆԻ ՆԱԽՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ.

Ինչս պարտ է ստանալ վասն բարեկամաց. եւ ոչ բարեկամ վասն ընչից։ Յանզգամաց մի ստանար բարեկամ, զի մի եւ դու անզգամ կոչեսցիս։ Ոչ կարես բարեկամ ճշմարիտ ստանալ, մինչեւ զչարն ոչ հալածեսցես։ Որք եղբարս ունին եւ սիրելիս խնդրեն, նման են, որք զիւրեանց անդաստանն թողեալ զօտարին գործեն։ Յաճախեա իսորհել նախ քան զառնելն։ Թէ ընդ իշխանութեամբ լինել ոչ ուսար, իշխան լինել մի համարձակի՛ր։ Զհոգի մահ ոչ կորուսանէ, այլ անմաքուր կեանք։ Ոչ է պարտ ընտրել, որ ի մեծամեծ քաղաքաց իցեն, այլ՝ որ մեծք ի քաղա-

քաց ելանիցեն։ Զոր հանդերձեալ իցես առնել՝ մի՛ ասիցես, գուցէ ի չկարելն՝ ծաղր լինիցիս։ Լաւ է լռել քան ունայն ինչ խօսել։ Շիթ մի իմաստից լաւ է ինձ եւ ոչ ծովակս բաղդից։ Ի վերայ շոգմոգաց որպէս ի վերայ գերեզմանաց անուն մարդոյ միայն գրեալ է։ Այնպէս լե՛ր առ ծնողս քո, որպէս կամիս լինել առ քեզ զորդիս քո։ Որպիսի հաս մատուցանես ծնողացն քոց, զնոյն ի ծերութեան քում ընկալցիս յորդւոց քոց։ Ընդ որդիս մի՛ ծիծաղեսցիս, զի մի՛ յետոյ լացցես զնոսա։

Խ. ԽԱՁԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ.

1. Եւ եռուն նմա ըմպել գինի ընդ լեզի խառնեալ։ Եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կամէր ըմպել։ Եւ հանեալ գնա ի խաչ, բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցցի բանն, որ ասացաւ ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ յիւրեանս եւ ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին եւ նստեալ պահէին զնա։ Եւ եդին ի վերայ գլխոյ նորա գրեալ զվնաս նո-
2. րա, թէ այս է Յիսուս Թագաւոր Հրէից։ Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ եւ մի յահեկէ։ Եւ որ անցանէին, հայհոյէին զնա՝ շարժէին զգլուխս իւրեանց եւ ասէին. Վա՜հ որ քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շինէիր զնա, ապրե-

ցո՛ զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։ Նոյնպէս եւ քահանայապետքն ձաղէին հանդերձ դպրօքն եւ ասէին. Զայլս ապրեցոյց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր է Իսրայէլի՝ իջցէ այժմ ի խաչէդ եւ հաւատասցուք դմա։ Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա, եթէ կամի զդա.
3. քանզի ասաց, եթէ Աստուծոյ որդի եմ։ Զնոյն եւ աւազակքն, որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա։ Եւ ի վեց ժամէ աւուրն խաւար եղեւ ի վերայ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամն։ Եւ զինն ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ եւ ասէ. Էլի՛ Էլի՛ լամա սաբաքթանի. այսինքն է Աստո՛ւած իմ, Աստո՛ւած իմ, ընդէ՞ր թողեր զիս։ Ոմանք յայնցանէ, որ անդէն կային՝ իբրեւ լուան, ասէին. յԵղիա կարդայ դա։ Եւ վազվազակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա։ Եւ կէսքն ասէին.
4. Թո՛ղ տեսցո՛ւք, եթէ գա՞յ Եղիա փրկել զդա։ Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ եւ արձակեաց զհոգին։ Եւ ահա՛ վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչեւ ի վայր. եւ երկիր շարժեցաւ. եւ վէմք պատառեցան. եւ գերեզմանք բացան. եւ բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. եւ ելեալ ի գերեզմանաց յետ յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ եւ երեւեցան բազմաց։

Իսկ հարիւրապետն եւ որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրեւ տեսին զշարժումն եւ զեղեալսն, երկեան յոյժ եւ ասեն. Արդարեւ Աստուծոյ որդի էր սա։

ԽԱ. Ի ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ.

Ծարաւեցաւ Տէրն ի խաչին որպէս զմարդ,
Այն, որ արար զՈվկիանոս ծով գեղեցիկ.
Սամարացւոյն ջուր խնդրելով աղբիւրն Տէրն,
Այն, որ արբոյց տիեզերաց զանմահութիւն։

Լեղի խառնեալ ընդ քացախոյ զինաւորին,
Արբուցանէր այն Երկնաւոր Թագաւորին.
Արեգակն խաւար դարձաւ միջօրէին,
Նսեմացաւ ընդ անտրգանս Անմահ Բանին։

Բարձրագոչ ձայնիւ գոչէր Տէրն ի խաչին
Ելիելին, և աւանդէր առ Հայր զհոգին.
Եւ վարագոյր հին օրինին սուրբ տաճարին
Ընդ չարչարանս Կենարարին պատառէին։

Երկիր հիմամբ ի յանդնդոց տասանէին,
Վէմք պատառեալ և գերեզմանքք բանային.
Դժոխք սարսեալ սասանեցաւ՝ բանտն ահագին,
Եւ արձակեաց զկապեալ հոգիսն, որ անդ էին։

ԽԲ. ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ։

1. Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան ի լեառն Ձիթենեաց. գնացին զհետ նորա եւ աշակերտքն։ Իբրեւ եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. «Ցաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն»։ Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրեւ քարընկէց մի. եդ ծունր, կայր յաղօթս եւ ասէր. «Հայր,
2. եթէ կամիս, անցո՛ զբաժակս զայս յինէն. բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին։» Եւ երեւեցաւ նմա հրեշտակ յերկնից եւ զօրացուցանէր զնա.
3. եւ էր ի տագնապի. եւ մտադիւրութեամբ եւս կայր յաղօթս։ Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրեւ զկայլակս արեան ոլոռն ոլոռն հեղեալ յերկիր։ Եւ յարուցեալ յաղօթից՝ եկն առ աշակերտսն եւ եգիտ զնոսա ի քուն ի տրրտմութենէն։ Եւ ասէ ցնոսա. «զի՞ ննջէք,
4. արի՛ք, կացէ՛ք յաղօթս, զի մի՛ մտանիցէք ի փորձութիւն։» Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ եւ որ կոչէրն Յուդա՝ մի յերկոտասանից՝ առաջնորդէր նոցա։ Եւ իբրեւ մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա՝ թէ ընդ որում
5. ես համբուրեցից, նա է՝ զնա ունիցիք։ Ասէ ցնա Յիսուս. «Յուդա՛, համբուրելո՞վ մատնես զորդի մարդոյ։» Իբրեւ տեսին, որ զնովաւն էին, որ ինչ եղեւն, ասեն ցնա. «Տէր, հարցո՛ւք զնոսա սրով։» Եւ եհար մի ոմն ի նո-

ցանէ զքահանայապետին ծառայ եւ ի բաց ե-
հան զաջոյ ունկն նորա։ Պատասխանի ետ Յի-
սուս եւ ասէ. «Թոյլ տուք մինչեւ ցայդ վայր։»
Եւ մատուցեալ յունկնն բժշկեաց զնա։ Եւ ասէ
ցեկեալսն ի վերայ նորա՝ զքահանայապետսն
եւ ցիշխանսն տաճարին եւ ցծերսն. «Իբրեւ ի
վերայ աւազակի ելիք սուսերօք եւ բրօք. հա-
նապազ ընդ ձեզ էի ի տաճարին եւ ոչ ձգե-
ցէք ձեռս յիս. այլ այս է ձեր ժամ եւ իշ-
խանութիւն խաւարի։» Եւ կալեալ զնա ածին
եւ մուծին ի տուն քահանայապետին։

ԽԳ. ԱՆԱՐԳԱՆՔ ՏԵԱՌՆ.

Ո՞վ կամաւ զանկապելին
Կապեալ զձեռս արձակողին,
Ի յապարանսն տանէին
Կայիափայ և Աննային.

Ծառայն զերեսն այն ապտակէր,
Ցորմէ սրովբէն թևասքօղէր,
Թուք արձակեալ պիղծ բերանով
Յայն, որ կուրին լոյս ծագեաց թքով։

ԽԴ. ՁԱՅՆ ԱՌ ՄԵՂԱՒՈՐՆ.

Ձ՞ինչ գործես, ո՛վ թշուառական.
Ընդէ՞ր ոչ փութաս թափել ի չար ամբարշտու-
թենէդ.

Ընդէ՞ր ոչ ողորմիս ոգւոյդ կորուսելոյ.
Ընդէ՞ր ոչ լաս եւ ողբաս զանօրէնութիւնս։

Ընդէ՞ր հուր ի հուր յաւելուս այրել դառ-
նապէս.
Ընդէ՞ր ի վերայ կայծականց և փշոց գնաս
հանապազ.
Հէ՞մ քարավէժ և դարահոս լինիս ի վախից.
Վասն է՞ր սուր սրես և նովին վիրաւորիս։

Զի ոչ ոք է, որ հրով հուր շիջուցանէ.
Եւ ոչ չարիւ բարւոյ հանդիպի.
Ո՞վ է որ փուշ տնկէ և խաղող կթիցէ.
Կամ որոմն սերմանիցէ և ցորեան հնձիցէ։

ԽԵ. ԾԱՌԱՅՆ ՁԱՐ.

1. Նմանեցաւ արքայութիւն երկնի առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ի մէջ ծառայից իւրոց։ Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտական մի բիւր քանքարոյ։ Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա վաճառել տէրն նորա եւ զկին նորա եւ զորդիս եւ զամենայն, որ ինչ եւ ունիցի, եւ հատուցանել։ Եւ անկեալ ծառայն երկիրպագանէր նմա եւ ասէր. Երկայնամիտ լեր առ-
2. իս եւ զամենայն հատուցից քեզ։ Դթացեալ

տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա եւ զփոխն եթող նմա։ Եւ ելեալ ծառայն եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց, որ պարտէր նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա խեղդէր եւ ասէր. Հատո՛ ինձ զոր պարտիս։ Արդ անկեալ ծառայակցին առ ոտս նորա, աղաչէր եւ ասէր. Երկայնամիտ լեր առ իս եւ հատուցից քեզ։ Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա
3. ի բանտ, մինչեւ հատուսցէ զպարտսն։ Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա, որ ինչ եղեւն, տրամեցան յոյժ. եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն, որ ինչ եղեւն։ Յայնժամ կոչեաց զնա տէրն եւ ասէ. Ծառա՛յ չա՛ր, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացեալ տէրն նորա, մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամենայն զպարտսն։

ԽԶ. ԶՄԵՌՆ.

Ի սիւդ ցրտագին
Արդ զոփայ բնութիւն,
Ծաղկի գլուխ լերին
Յասրաքատակ ձիւն։

Ոչ հեշտին կարկաջ
Ի մարմանդ գալար,

Ոչ երգ քաղցրաւաչ
Յոստախիտ դադար։

Ո՞ւր են թերթք վարդի
Յաղթօղք ծիրանւոյ.
Ո՞ւր ոսկեծղի
Լիութիւն անդոյ։

Ո՞ւր թփոց պարիկ
Երգահան սոխակ
Մեզ ի պահ լռիկ
Հնչել զիւր նուագ։

ԽԷ. ԱՂՕԹՔ.

1. Որպիսի դողումն եւ ահեղ ահաւիրք են յանցաւորացն, յորժամ առաջի դատաւորին կայցեն ամօթով մեղացն. զի՞՝ դ այլագունին դէմք նոցա. զի՞՝ դ սոսկան եւ սարսափին։ Եւ զի զդողիւ հարկանին յահեղ դիմաց դատաւորին, գլխակորեալք եւ ակն ի խոնարհ լեզուակապք կան առաջի։ Եւ եթէ աղաչել եւ մաղթել ինչ յանդգնիցին, անհամարձակ լեզուաւ հիւանդաձայնս բարբառին. արտասուեն, աղաչեն, մաղթեն, զի ի գութ եւ յողորմ զդատաւորն ածիցեն։ Եւ յորժամ դատաւորն առ նոսա բարբառի, ոչ իշխեն զերեսս դարձուցանել կամ խօսել ընդ ումեք,

այլ միայն ի դատաւորն նային բազում պատկառանօք։

2. Իսկ որչափ եւս առաւել կարի կարեւոր է մեզ բազում պատկառանօք կալ առաջի Հաւորի մեծի Դատաւորին, ահեղ ահիւ մտանել եւ կալ յանդիման երեսացն Աստուծոյ եւ յորդահոս արտասուօք խնդրել զթողութիւն։ Ոչ այլուր զմիտս եւ այլուր զխորհուրդսն պարտիմք առաքել. այլուր զլսելիս եւ այլուր զտեսանելիս յածեցուցանել. պարտ է միշտ աղաչել եւ ժտել եւ խնդրել ի ձեռն աղօթից։ Որք միամիտ մտօք եւ աննենգ հաւատովք աղօթեն առ Աստուած եւ խնդրեն զբարին, ընդունին զխնդիրս ամենայն, որպէս ընկալան հարքն մեր առաջինք։ Զէ ինչ պիտոյ յօդումն բազում բանից աղօթականին. մաքուսաւորն մի բարբառ արձակեաց եւ ընդունելի եղեն աղօթք նորա. եւ Մովսէս անշշունչ բերանով իսկ աղաղակէր եւ զծովն յատակաբար բաժանէր. աղօթք Եղիայի զերկինս փակեցին եւ բացին. աղօթք Դաւթի զսուր հրեշտակին դադարեցուցին. աղօթքն Յօնանու զնա ի փորոյ կետին հանին կենդանի. աղօթք զհիւանդս բժշկեցին, զբորոտս մաքրեցին, զկոյրս լուսաւորեցին, զմեղաւորս արդարացուցին։

3. Յորժամ հաւատով աղօթեսս առ Աստուած, ընդունիս մեղաց թողութիւն, ընդունիս զերկնից զարքայութիւնն, ընդունիս մարմնոյ առողջութիւն, ընդունիս աւուրս բարիս եւ

կեանս խաղաղականս։ Աղօթք զաղքատս մեծացուցանեն եւ զտկարս զօրացուցանեն. աղօթք զհիւանդացեալսն բժշկեն, ի ծփանաց ծովու զերծուցանեն, ի յորձանաց գետոց ապրեցուցանեն, զքաղցեալս կերակրեն, զմերկս զգեցուցանեն, զմահս տարաժամս արգելուն։

ԽԸ. ՈՁԽԱՐՆ ԿՈՐՈՒՍԵԱԼ.

Աստ ուր ուռեաց ոստք խիտ առ խիտ
Կախին զչուրբս ականակիտ,
Բազմեալ բլրոյս դու ի ստորոտ
Երգեա՛ ի նուրբ քոյին ծղոտ.
Ծանօթ ձայնիդ թերևս ի լուր
Դարձցի ոչխարն առ հովիւ իւր։

Ահա՛ զպատկեր նորին վճիտ
Հայիմ ի խորս ալեաց լճիդ.
Ահա՛ բլրոյդ նա բարձր ի սեպ,
Կացեալ ի վայր ակնարկէ ստէպ.
Նայեա՛ց ի վեր ուրախ լեր արդ,
Հովիւդ քա՛ջ, գտեր զոչխարդ։

ԽԹ. ՄԱՀ ԴՈՂԻԱԹՈՒ

1. Եւ ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ։ Եւ Սաւուղ եւ արք Իսրայէլի ժողովեցան ի հովիտսն եւ ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ Եւ այլազ-

գիքն կային ի վերայ լերինն յայնմ կողմանէ. եւ Իսրայէլ կայր ի վերայ լերինն յայսմ կողմանէ. եւ հովիտն ի մէջ նոցա։

2. Եւ էլ այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն Գողիաթ անուն նորա, բարձրութիւն նորա ի վեց կանգուն եւ թզաւ. եւ սաղաւարտ ի գլուխ նորա. եւ զրահս վերտս զգեցեալ. եւ սռնապանք պղնձիք ի վերայ բարձից նորա, եւ վահան պղնձի ի վերայ թիկանց նորա. եւ բուն գեղարդան նորա իբրեւ զստորի ոստայնանկաց. եւ զինակիր նորա առաջի նորա երթայր։

3. Եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Իսրայէլի եւ ասէ ցնոսա. «ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ո՞չ ապաքէն ես այլազգի եմ եւ դուք երրայեցիք ծառայք Սաւուղայ. ընտրեցէ՛ք դուք ձեզ այր մի եւ իջցէ առ իս. եթէ կարասցէ կռուել ընդ իս եւ հարկանել զիս, եղիցո՛ւք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից եւ հարից զնա՝ եղիջի՛ք դուք մեզ ի ծառայս եւ ծառայեսջի՛ք մեզ»։

Իբրեւ լուաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն՝ զահի հարան եւ երկեան յոյժ։

4. Եւ էր այր մի ի Բեթղահեմէ, եւ անուն նորա Յեսսէ. եւ էին նորա որդիք ութ. եւ գնացին երեք որդիքն Յեսսեայ մեծագոյնք զհետ Սաւուղայ ի պատերազմ. եւ Դաւիթ էր կրտսեր. եւ ասէ Յեսսէ ցԴաւիթ յորդի իւր. «սա՛ռ դու եղբարց քոց զարդու փոխնդոյս այսորիկ եւ

զտասն նկանակս զայսոսիկ եւ պնդեա՛ ի բանակն եւ տո՛ւր եղբարց քոց. եւ զտասն մածառակս կաթին տացե՛ս հազարապետին. եւ տեսցե՛ս զողջոյն եղբարց քո. եւ եթէ պէտք ինչ իցե՛ն նոցա, իմացի՛ս»։

5. Եւ կանխեաց Դաւիթ ընդ առաւօտն եւ եթող զոչխարսն ի տուարածականն. եւ եկն ի տափարակն եւ ի զօրն. եւ եթող Դաւիթ զկարասին ինքենէ ի ձեռն վանապանին եւ ընթացաւ ի ճակատն. եւ եկն եհարց զողջունէ եղբարցն իւրոց. եւ մինչդեռ նա խօսէր, ահա՛ Գողիաթ խօսեցաւ ըստ նմին բանից. եւ լուաւ Դաւիթ։ Եւ խօսեցաւ Դաւիթ ընդ արսն, որ շուրջ կային զնովաւ եւ ասէ. «զի՞նչ առնիցէ արքայ առն՝ որ հարկանիցէ զայլազգին զայն եւ բառնայցէ զնախատինս յԻսրայէլէ։

6. Եւ լու եղեն բանքն՝ զոր խօսեցաւ Դաւիթ. եւ պատմեցին առաջի Սաւուղայ. եւ առ զնա առ ինքն։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «մի՛ անկցի սիրտ տեառն իմոյ ի վերայ իւր. ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ»։ Եւ ասէ Սաւուղ ցԴաւիթ. «գուցէ ոչ կարիցես երթալ կռուել ընդ այլազգւոյն. զի դու մանուկ ես եւ նա այր պատերազմող ի մանկութենէ իւրմէ»։

7. Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «արածէր ծառայ քո զխաշինս հօր իւրոյ, եւ յորժամ գայր առիւծ կամ արջ եւ առնոյր ոչխար ի հօտէ

անտի, ելանէի զՀետ նորա եւ Հարկանէի զնա եւ կորզէի ի բերանոյ նորա. եւ եթէ յառնէր ի վերայ իմ, ունէի զփողից նորա եւ Հարկանէի եւ սպանանէի զնա։ Զառիւծ եւ զարջ սատակէր ծառայ քո եւ եղիցի այլազգին իբրեւ զմի ի նոցանէ. եւ արդ ոչ երթայց սատակեցից զնա եւ բարձից այսօր զնախատինս յԻսրայելէ։ Տէր Աստուած, որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն եւ ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուսցէ զիս ի ձեռաց այլազգւոյն այնորիկ»։ Եւ ասէ Սաւուղ. «Երթ եւ Տէր եղիցի ընդ քեզ»։

8. Եւ զգեցոյց Սաւուղ Դաւթի զվարապանակս իւր եւ սաղաւարտ պղնձի ի գլուխ նորա, եւ այգոյց նմա զրահս, եւ ած Դաւիթ զսուսեր իւր ընդ մէջ ի վերայ վարապանակացն. եւ գրթեաց ի գնալն միանգամ եւ երկիցս. եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. «ոչ կարեմ երթալ սոքօք, զի չեմ հմուտ». եւ հանին զայն ի նմանէ։ Եւ առ զգուպն իւր ի ձեռին իւրում. եւ ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեղեղատէն. եւ եդ զնոսա ի հովուական մաղախին, յոր սովոր էր զքարն ժողովել, եւ զպարսն ի ձեռին իւրում. եւ մերձեցաւ առ այրն այլազգի։ Եւ գնայր գայր այլազգին եւ մերձենայր առ Դաւիթ. եւ այր վահանակիր առաջի նորա։

9. Իբրեւ հայեցաւ այլազգին եւ եռեսս զԴաւիթ, արհամարհեաց զնա. զի էր պատանեակ խարտեաշ եւ աչօք գեղեցիկ։ Եւ ասէ այլազգին.

«զի՞արդ՝ շո՞ւն եմ ես, զի ցպով եւ քարամբք գաս ի վերայ իմ» եւ ասէ Դաւիթ. «նաեւ վատթաբ եւս ես քան զշունն»։ Եւ ասէ այլազգին ցԴաւիթ. «եկ առ իս եւ տայ զմարմին քո թռչնոց երկնից եւ գազանաց երկրի»։

10. Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. «դու գաս ի վերայ իմ սրով եւ գեղարդեամբ եւ ասպարաւ. եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց. եւ փակեսցէ զքեզ Տէր այսօր ի ձեռս իմ եւ ոպանիցս զքեզ եւ առիցս զգլուխ քո ի քէն. եւ տայց զգէշ քո եւ զդիակունս բանակի այլազգեացդ յաւուր յայսմիկ թռչնոց երկնից եւ գազանաց երկրի. եւ ծանիցէ ամենայն երկիր թէ գոյ Աստուած ի մէջ Իսրայէլի»։

11. Եւ յարեաւ այլազգին եւ եկն եւ մերձեցաւ ընդդէմ Դաւթի. եւ ձգեաց Դաւիթ զձեռն իւր ի մաղախին եւ առ անտի քար մի եւ պարսաքարեաց եւ եհար զճակատ այլազգւոյն. եւ եմուտ սաղաւարտն ի ճակատն՝ եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Եւ ընթացաւ Դաւիթ եւ հարաւ ի վերայ նորա. եւ առ զնորին սուսեր եւ մերկաց զնա ի պատենից իւրոց եւ սպան զնա եւ եհատ զգլուխ նորա։

Ծ. ԴԱՒԻԹ.

Փոքր ի յեղբարս իմ ես էի, կրտսեր ի տան Հօր իմոյ. ի սոյլ սրնգի ընդ արօտ արածէի զխաշն Հայրենի։

Արարին ձեռք իմ ինձ քնար, գործի մատունք իմ
օրհնութեան։
Օրհնեսցէ անձն իմ զՏէր, որ զհրեշտակ իւր ա-
ռաքեաց.
Եւ ի հօտէ անտի խաշանց էառ ամբարձ զիս
յաթոռ.
Իւղ զգլխով իմով եհեղ, էօծ կացոյց զիս թա-
գաւոր։
Ահա՛ եղբարք իմ մեծամեծք, ահա՛ եղբարք իմ գե-
ղեցիկք.
Այլ ոչ ընտրեաց զնոսա Տէր, ոչ հաճեցաւ Տէր
ընդ նոսա։
Ելի ընդ առաջ այլազգւոյն, զդիս նորա նզովեցի.
Հանի զսուսերն ի նմանէ, հատի զգլուխ նորա
նովին,
Ի բաց յորդւոցն Իսրայէլի զնախատինս բարձեալ։

ԾԱ. ՔԷՆ ՍԱՒՈՒՂԱՅ.

1. Եւ խօսեցաւ Սաւուղ ընդ Յովնաթանայ որդ-
ւոյ իւրում եւ ընդ ամենայն ծառայս իւր
սպանանել զԴաւիթ։ Եւ Յովնաթան որդի Սա-
ւուղայ հաճեալ էր ընդ Դաւթի յոյժ. եւ
պատմեաց Յովնաթան Դաւթի եւ ասէ. Հայր
իմ խնդրէ սպանանել զքեզ. զգոյշ լեր վա-
ղիւ ընդ առաւօտն. եւ թաքիջիր եւ նստի-
ջիր ի թաքստեան. եւ ես ելից եւ կացից մօտ
առ հօր իմում եւ խօսեցայց վասն քո ընդ

հօր իմում. եւ տեսից եթէ զի՞նչ իցէ եւ պատ-
2. մեցից քեզ։ Եւ խօսեցաւ Յովնաթան վասն
Դաւթի բանս բարիս ընդ Սաւուղայ հօր իւ-
րում եւ ասէ ցնա. Մի՛ մեղիցէ արքայ ի ծառայ
իւր Դաւիթ, զի ոչինչ մեղաւ նա քեզ. եւ գործք
նորա բարութեամբ են առ քեզ յոյժ. եւ եդ
զանձն իւր ի ձեռին իւրում եւ եհար զայ-
լազգին, եւ արար փրկութիւն մեծ. եւ ամե-
նայն Իսրայէլ տեսին եւ ուրախ եղեն. եւ ընդ-
էր մեղանչիցես յարիւն արդար սպանանել
զԴաւիթ տարապարտուց։ Եւ լուաւ Սաւուղ
ձայնի Յովնաթանու. եւ երդուաւ Սաւուղ եւ
3. ասէ. Կենդանի է Տէր, եթէ մեռանիցի։ Եւ
կոչեաց Յովնաթան զԴաւիթ. եւ պատմեաց
նմա Յովնաթան զամենայն բանս զայսոսիկ.
եւ տարաւ Յովնաթան զԴաւիթ առ Սաւուղ.
եւ էր առաջի նորա իբրեւ յերեկն եւ յեռան-
դրն։ Եւ յաւել եւս լինել պատերազմ. եւ զօ-
րացաւ Դաւիթ տալ պատերազմ ընդ այլազ-
գիսն. եւ եհար ի նոցանէ հարուածս մեծա-
4. մեծս յոյժ. եւ փախեան յերեսաց նորա։ Եւ
եղեւ այս չար ի Տեառնէ ի վերայ Սաւուղայ.
եւ ինքն նստէր ի տան եւ գեղարդն ի ձեռին
նորա. եւ Դաւիթ երգէր ձեռօք իւրովք. եւ
խնդրէր Սաւուղ հարկանել զգեղարդն ընդ
Դաւիթ եւ եհար ընդ որմն. եւ Դաւիթ ել գնաց
եւ զերծաւ։ Եւ եղեւ ի գիշերին յայնմիկ ա-
ռաքեաց Սաւուղ հրեշտակս ի տուն Դաւթի

պահել զնա. զի սպանցէ զնա ընդ առաւ օտն։
Եւ Դաւիթ փախեաւ եւ ապրեցաւ։

ԾԲ. ԱՌ ՍՈԽԱԿՆ.

Ընդ հովանեաւ սաղարթագեղ
Խոնջ և թախիծ ծուփք ի ճակատ
Նստիմ յերգոցդ ի լուր գեղգեղ
Եւ ի հոգոց հանգչիմ ազատ։

Ո՜հ, դու ի նուագդ յաւերժացեր,
Նստայց ես աստ, սոխակ քաղցրիկ,
Մինչև տացես ինձ քաղցր ի նիրհ
Ննջել յերգոցդ ի դայլայլիկ։

ԾԳ. ՈՒՍՊԱՀՆ.

1. Ուսպահն նստի հանապազ եւ խորհի պատուհաս չարեաց նախանձորդին. ըղձանայ, նիւթէ չար ընկերին. նմա խորհի եւ զսով. նմա խորհի եւ զսուր. նմա խորհի եւ զհէնս. նմա խորհի եւ զմահս եւ զամենայն չարս։ Աքօղին երեսք նորա ի տեսչութենէ նորա. եթէ ի ճանապարհի ուրեք դիպեսցի, խնդրէ թողուլ զճանապարհն. եթէ յեկեղեցւոջն տեսանիցէ, չկամի եւ յեկեղեցին մտանել. եւ եթէ ի հրապարակին
2. դիպեսցի, զգլուխն խոնարհեցուցանէ։ Եւ եթէ չար ոք զնմանէ խօսեսցի, նա ի վեր հայեցեալ զարթնու եւ զուարթանայ. եւ եթէ բան ինչ բարի զնախանձորդէն լսիցէ, տրտմի. եւ տխրին երեսք նորա։ Սիրելի է թշնամեաց նորա եւ թշնա-

մի է բարեկամաց նորա։ Ուսպահն չարայուշ ոչ երբէք դադարէ ի սպանութենէ. նա եւ ի զբօսանս իւր մարդասպան է, զի զոխս ընկերին ի սրտին ունի. նա եւ յանկողինս իւր մարդասպան է, յորժամ զոխս ընկերին յիշէ. նա եւ ի տան մարդասպան է. նա եւ յեկեղեցւոջ մարդասպան է. եւ ի հրապարակս մարդասպան է, զի զոխս հանապազ ի սրտի իւրում կրէ։

ԾԴ. ԱՇՈՒՆ.

Զամառն և զգարուն.
Արկեալ զառաջեաւ,
Աշուն ճոխ մրգաւ
Գայ բիւրաբեղուն.

Ճակատուն պսակ
Փայլէ շիկագոյն
Որթոց սաղարթուն
Թև քաջողկուզակ.

Եւ յամաղթեղջիւր
Լի գեղազուարճ
Իբրև ի կապարճ
Ցորեան ոսկեթոյր.

Նուռն թագաւոր
Զարդ փառաց նորին,
Եւ շնորհք ի ձեռին
Կարմրորակ խնձոր։

ԾԵ. ՄԱՀ ՍԱՒՈՒՂԱՅ.

1. Եւ եղեւ յետ մահուանն Սաւուղայ, դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զԱմաղէկ. եւ նստաւ Դաւիթ աւուրս երկուս։ Եւ եղեւ յետ աւուրն երկրորդի եւ ահա այր եհաս ի բանակէ զօրուն Սաւուղայ. եւ հանդերձք իւր պատառեալք եւ հող զգլխով իւրով. եւ եղեւ մոտանել նորա առ Դաւիթ. անկաւ եւ երկիր եպագ նմա. եւ ասէ ցնա Դաւիթ. Զի՞նչ զրոյց է,
2. պատմեա ինձ։ Եւ ասէ. Փախեաւ ժողովուրդն ի պատերազմէն. եւ անկան բազումք ի ժողովրդենէն եւ մեռան. եւ Սաւուղ եւ Յովնաթան մեռան։ Եւ ասէ Դաւիթ ցպատանին, որ պատմեաց նմա. Զի՞արդ գիտես եթէ մեռաւ Սաւուղ եւ Յովնաթան որդի նո-
3. րա։ Եւ ասէ պատանին, որ պատմեաց նմա. «դիպելով դիպեցայ ի լերինն. եւ ահա Սաւուղ յեցեալ կայր ի նիզակն իւր. եւ ահա կառք եւ ախոյեանք հեծելոց գումարեցան ի նա. եւ հայեցաւ ի թիկունս իւր եւ ետես զիս. եւ կոչեաց զիս. եւ ասեմ. Ա՛ւասիկ եմ. եւ ասէ ցիս. Ո՞վ ես դու. եւ ասեմ. Ամաղեկացի եմ ես. եւ ասէ ցիս. Արի՛ ի վերայ իմ եւ սպան զիս. զի կալաւ զիս մուրթ անհնարին։ Եւ յարեայ ի վերայ նորա եւ սպանի զնա. եւ առի զթագն ի գլխոյ նորա եւ զապարանջանս ի բազկէ նորա եւ բերի զնոսա տեառն

4. իմում այսր»։ Եւ բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց եւ պատառեաց զնոսա. եւ ամենայն արք որ ընդ նմա պատառեցին զհանդերձս իւրեանց. եւ կոծեցան եւ պահեցին եւ լացին մինչեւ ցընդերեկս ի վերայ Սաւուղայ եւ Յովնաթանու որդւոյ նորա եւ ի վերայ տանն Իսրայելի, զի հարան սրով։ Եւ ասէ Դաւիթ ցպատանին, որ պատմեաց նմա. Ուստի՞ ես դու. եւ ասէ. Որդի առն պանդխտի եմ ես։ Եւ ասէ ցնա Դաւիթ. Եւ զի՞արդ ոչ երկեար ձգել զձեռն քո ապականել զօծեալն Տեառն։
5. Եւ կոչեաց Դաւիթ զմի ի մանկտւոյն եւ ասէ. Մատիր եւ պատահեա դմա. եւ եհար զնա եւ մեռաւ։ Եւ ասէ ցնա Դաւիթ. Արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն եւ ասէ թէ ես սպանի զօծեալն Տեառն։ Եւ ողբաց Դաւիթ զողբս ի վերայ Սաւուղայ եւ ի վերայ Յովնաթանու որդւոյ նորա։

ԾԶ. ՀՐԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ.

Զիշխան ժողովրդեան մի հայհոյեսցես։ Որ հարկանէ զհայր իւր կամ զմայր իւր մահու մեռցի։ Որ բամբասիցէ զհայր իւր կամ զմայր իւր մահու մեռցի։ Համբաւ ոուտ մի ընդունիցիս։ Եթէ լսելով լսիցես ձայնի իմում եւ արասցես զամենայն, զոր ինչ ասացի քեզ, եղէց թշնամի թշնամեաց քոց եւ հակառակ կացից հակառակորդաց քոց։

ЭРИВАНСКОЙ УЧЕБНИКИ
УЧЕБНИКИ
СЕМИНАРІИ

ԾԷ. ԶՕՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ.

Աղեղունք հզօրաց տկարացան.
Եւ տկարք զգեցան զօրութիւն.
Լցեալք հացիւ նուաղեցին.
Եւ քաղցեալք բնակեցան յերկրի։

Զի ամուլն ծնաւ եօթն.
Եւ բազմածինն նուաղեցաւ.
Տէր մեռուցանէ և կեցուցանէ,
Իջուցանէ ի դժոխս և հանէ։

Տէր աղքատացուցանէ և մեծացուցանէ,
Խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ.
Կանգնէ յերկրէ զտնանկն.
Եւ յարուցանէ զաղքատն յաղբևաց
Նստուցանել զնոսա ընդ զօրաւորս ժողովրդեան.
Եւ աթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա։

Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր.
Եւ մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր.
Եւ մի պարծեսցի մեծատունն ի մեծութիւն իւր,
Այլ այնու պարծեսցի, որ պարծիցին,
Իմանալ և ճանաչել զՏէր
Եւ առնել զիրաւունս և զարդարութիւն ի մէջ երկրի։

ԾԸ. ՕՐՀՆԵՑԷՔ ՄԱՆԿՈՒՆՔ ԶՏԷՐ.

Ի հովիտս Գաբաոնայ.

Տուք ձեռն ի ձեռն հապա մանկունք
Հրաւէր ի դաշտ կարգան ծաղկունք.
Գեղեցկագոյն տարւոյ ամիս
Ահա հասեալ է մեզ մայիս.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Տեսէք զեթերս, ոհ, զի պայծառ
Ո՞հ զի էքնաղ երկիր խոնարհ,
Լուսացնցուղ օդք թափանցիկք
Թուին բիւրեղք երկնաբացիկք.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Եկայք իջցուք ի դաշտ հովիտ
Ձեմել ի մարգս ծաղկախիտ,
Բլուրքս և մայրքս են դալարիք
Գետք և առուակքս խաղաղիկ.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Անթել կապերտ կանաչորակ
Անծալ սփռի առ հասարակ,
Եւ երփներանգ անկեալ նարօտ
Ի բիւրաբիւր ծաղկանց ծրղօտ.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Տեսէք քանի՞ բիւրք են ծաղկանց,
Քանի՞ երանգք, ձևք գերազանց.
Զի՞ անուշակ հոտս նրբբին
Զոր ի հեռուստ քիմք մեր արբին.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Հայեցարուք ի թիթեռնիկ
Հեզաթռիչ ծաղկէ ծաղիկ,
Որոց նման և ինքն պերճ
Ծաղկաթեւէ լայերաց մէջ.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Լուարուք զերգ ծիծառանցդ բիւր
Ի հարաւոյ հասեալ մեզ հիւր,
Ի ծայր ծառոցս եղեալ բունիկ
Ու զվտակաւս թափառիկ.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Լսէք հեռուստ և հեզ բառաչ.
Ահա գառինքն ի սեզ կանաչ,
Եւ ուլք ի վազս ձեզ նման
Խայտան ի սոյլ հովուի սրնգան.
Զաստուածայինն աստ տեսէք սէր
Եւ օրհնեցէք մանկունք զՏէր։

Վ. Ե Ր Զ։

ՅԱՆԿ

		Եր.
Ա. Գարուն	Ս. Գիրք	3
Բ. Շաւիղք ամբարշտաց	Նոյն	—
Գ. Մշակք այգւոյն . .	Նոյն	4
Դ. Երգ դաշտաց . . .	Մ. Զախչախեան .	—
Ե. Որսորդ	Ղոմպիանոս . .	5
Զ. Պատուիրանք Տեառն .	Ս. Գիրք	—
Է. Երազ	Նոյն	—
Ը. Տրտունջ	Մխիթար Գոշ . .	6
Թ. Իմաստութիւն . . .	Ս. Գիրք	—
Ժ. Փարիսեցին և Մաքսաւորն	Նոյն	7
ԺԱ. Խրատ	Նոյն	—
ԺԲ. Գարուն	Ե. Հիւրմիւզեան .	8
ԺԳ. Սամարացին ողորմած	Ս. Գիրք . .	—
ԺԴ. Ողորմածութիւն . .	Նոյն	9
ԺԵ. Որոշ աղքատին . .	Նոյն	—
ԺԶ. Աղքատն	Յոհան Մանդակունի	10
ԺԷ. Պատգամք աստուածայինք	Ս. Գիրք	—
ԺԸ. Թղենին անպտուղ .	Նոյն	11
ԺԹ. Զանասիրութիւն . .	Նոյն	—
Ի. Առ մեղու	Մ. Զախչախեան .	12
ԻԱ. Անծեղ	Մխիթար Գոշ . .	—
ԻԲ. Պատարագն Աբրահամու	Ս. Գիրք	13
ԻԳ. Բանք Փրկչին . . .	Նոյն	14
ԻԴ. Առեղծուած ի Յովնան	Ե. Հիւրմիւզեան .	15
ԻԵ. Յովսէփ գեղեցիկ . .	Ս. Գիրք	—
ԻԶ. Սերմանահան . . .	Նոյն	18

ԻԷ. Ունայնութիւն . . .	Մ. Ջախջախեան .	—
ԻԸ. Անկումն Երուսաղէմի	Ս. Գիրք . . .	19
ԻԹ. Բարկութիւն . . .	Յոհան Մանդակունի	—
Լ. Դանիէլ մարգարէ . .	Ս. Գիրք	20
ԼԱ. Գարուն	Մ. Ջախջախեան .	23
ԼԲ. Երկիր ի փոքունց .	Մխիթար Գօշ . .	24
ԼԳ. Ամառն	Ե. Հիւրմիւզեան .	—
ԼԴ. Բու և Արծիւ . .	Մխիթար Գօշ . .	25
ԼԵ. Ուխտ Յեփթայեայ .	Ս Գիրք	—
ԼԶ. Ի մահ սոխակին . .	Ա. Բագրատունի .	27
ԼԷ. Իմաստուն կուսանք .	Ս. Գիրք	—
ԼԸ. Եղանակք	Ե. Հիւրմիւզեան .	28
ԼԹ. Բանք նախնի իմաստասիր.	Սոփերք . . .	29
Խ. Խաչելութիւն Տեառն .	Ս. Գիրք	30
ԽԱ. Ի խաչելութիւն Տեառն	Ն. Շնորհալի . .	32
ԽԲ. Մատնութիւն Տեառն	Ս. Գիրք	33
ԽԳ. Անարգանք Տեառն .	Ն. Շնորհալի . .	34
ԽԴ. Զայն առ մեղաւորն .	Յոհան Մանդակունի	—
ԽԵ. Ծառայն չար . . .	Ս. Գիրք . . .	35
ԽԶ. Զմեռն	Ղ. Ալիշանեան . .	37
ԽԷ. Աղօթք	Յոհան Մանդակունի	36
ԽԸ. Ոչխարն կորուսեալ .	Ե. Հիւրմիւզեան .	39
ԽԹ. Մահ Գողիաթու . .	Ս. Գիրք . . .	—
Ծ. Դաւիթ	Ե. Հիւրմիւզեան .	43
ԾԱ. Քէն Սաւուղայ . .	Ս. Գիրք . .	44
ԾԲ. Առ սոխակն . . .	Ե. Հիւրմիւզեան .	46
ԾԳ. Ոխապահն	Յոհան Մանդակունի	—
ԾԴ. Աշուն	Ղ. Ալիշանեան .	47
ԾԵ. Մահ Սաւուղայ . .	Ս. Գիրք	48
ԾԶ. Հրաման Աստուծոյ .	Նոյն	49
ԾԷ. Զօրութիւն Աստուծոյ	Նոյն	50
ԾԸ. Օրհնեցէք մանկունք զՏէր	Ղ. Ալիշանեան . .	51

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Երես	Տող		Սխալ	Ուղիղ
» 5	» 8	ներքևից	սորա	նորա
» 6	» 8	վերևից	զծնունդս	զծնունդս
» 7	» 2	ներքևից	խրատուի	խրատտուի
» 9	» 10	»	աղքաա	աղքատ
» 9	» 11	»	քաղաքի	ի քաղաքի
» 11	» 3	»	անդադաղ	անդանդաղ
» 14	» 2	»	գաղտնի	գաղտնի
» 15	» 1	վերևից՝	ոչէ	ոչ է
» 18	» 6	ներքևից	աւաղ	աւաչ
» 38	» 11		գծովն	զծովն
» 40	» 8	վերևից	պզնձիք	պզնձիք
» 42	» 14	»	պգոյց	ագոյց

2013

3755

<< Ազգային գրադարան

NL0061989